ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսուցանող գրավոր աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները և տեսակները

Կատարող՝ Իրինա Խաչատրյան

Մեղրաշատի միջնակարգ դպրոց
հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Զիլֆիմյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն……..2

Բանավոր խոսքի զարգացման միջոցները……4

Գրավոր խոսք……11

Եզրակացություն…….....25

Օգտագործված գրականության ցանկ……27

Ներածություն

Գրավոր և բանավոր խոսքը, նրանց ուսուցումը թերևս ամենապատասխանատուն և ամենախոցելին են ուսումնական գործընթացում: Սովորողները դժվարանում են շարադրել սեփական մտքերը, քանի որ շատ աղքատ է լինում բառապաշարը, ասելիքը՝ միօրինակ, իսկ ձևակերպումները՝ ոչ ճիշտ: Չեն պահպանվում նաև շարադրանքի կառուցվածքի հիմնական պահանջները, թեև բոլոր դասարանների ծրագրերում հանգամանորեն ներկայացված են բանավոր և գրավոր խոսք կառուցելու սկզբունքները: Այսօրվա դպրոցում էական շատ փոփոխություններ են կատարվել: Փոխված են միջնակարգ դպրոցում հայոց լեզվի և գրականության դասավանդման հայեցակարգը, ուսումնական ընդհանուր նպատակները, առարկաների բովանդակային ընդգրկումը, ծրագրերն ու ժամաքանակները: Նոր տեսք ու բովանդակություն են ստացել սովորողին ներկայացվող պահանջները, աշակերտների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների պահանջվող ծավալը, արժեքային համակարգը: Մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ տվյալ ժողովրդի գրական լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ բանավոր և գրավոր խոսքի մշակույթի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի կրթությունն ու դաստիարակությունը: Լեզվի մեջ ու լեզվի միջոցով է, որ երեխան շրջապատի, բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու ու պայքարելու համար: Կարդալու և գրելու ուսուցումը, ճիշտ է, երեխայի մեջ գործնական կարողությունների զարգացման որոշակի նպատակ ունի, սակայն, վերջին հաշվով, դրանց ուսուցումը ևս ինքնանպատակ չէ. Դրանք խոսքի զարգացման միջոցներն են: Այդ է պատճառը, որ մայրենի լեզվի ծրագրում հատուկ տեղ ունի կապակցված խոսքի ուսուցումը, քանի որ այն խոսքի զարգացման աշխատանքի վերջնական նպատակն է: Կապակցված խոսքի ստեղծումը, որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ ունի: Դպրոցական տարիքում երեխան հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում, ընկալում է լեզվի հիմնական ատաղձն ու

յուրահատկությունները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ պետք է դեռևս տարրական դասարաններից մեծ ուշադրություն դարձնել երեխայի գրավոր խոսքի զարգացմանը,որն էլ իր հերթին կնպաստի բանավոր խոսքի զարգացմանը:

Բանավոր խոսքի զարգացման միջոցները

Երեխան դպրոց է ընդունվում լեզվական որոշակի կարողությամբ.Նա մայրենի լեզվով խոսում, արտահայտում է իր մտքերը: Դպրոց նոր ընդունված երեխայի լեզվական վիճակը դպրոցական պահանջների տեսակետից սովորաբար բավարար չի լինում և անհրաժեշտ է ուսումնառության հենց սկզբից մեծ ու դժվարին աշխատանք տանել նրա խոսքի զարգացման ուղղությամբ: Աշակերտի խոսքի աղքատությունը հիմնականում նրա մտավոր ցածր մակարդակի, մտքի պարզունակության արտահայտությունն է: Դա պայմանավորված է երեխաների աշխարհաճանաչողության պակասով, որ դրսևորվում է շատ երևույթներ, առարկաներ չճանաչելու հանգամանքով, տեսած և զգացած շատ երևույթներ, իրողություններ համապատասխան բառերով արտահայտելու կարողության պակասով: Խոսքի զարգացումը մեծ դեր է կատարում աշակերտների ընդհանուր զարգացման ու դաստիարակության գործում, քանի որ լեզուն մարդկային հաղորդակցման միջոց լինելով հանդերձ, միաժամանակ մտածողության միջոց է: Դպրոցի գերխնդիրը ոչ միայն երեխային կրթելն ու դաստիարակելն է, այլև սովորողի լեզվական ունակությունների ու կարողությունների մշակումն ու հարստացումը, որը հսկայական դեր է կատարում վաղվա քաղաքացու աշխարհայացքի ձևավորման գործում: Բոլոր ժամանակներում հմուտ ուսուցիչները կարևորել են մայրենիին կատարելապես տիրապետելու կամ գոնե գրական հայերենը անաղարտ պահելու անհրաժեշտությունը:Սակայն, ցավոք, աշակերտների խոսքի զարգացման բարձր մակարդակ ապահովելը դեռևս մնում է գրեթե անլուծելի հարց: Աշակերտի խոսքի զարգացման խնդիրը շատ արդիական է և այդ խնդրի լուծման բանալին ուսուցչի ձեռքին է: Ցանկացած առարկայի յուրաքանչյուր դաս բացի լեզվական գիտելիքներ հաղորդելուց, պիտի հոգեկան բավականություն պարգևի թե՛ իրեն, թե՛ աշակերտին: Ուսուցիչը սեփական օրինակով՝ բարեկիրթ վարքագծով և գրագետ ու անթերի խոսքով, բազմակողմանի զարգացվածությամբ պետք է օրինակ հանդիսանա իր սաների համար

և հետո միայն պահանջի նրանցից ցանկալի արդյունք: Ուսման գործընթացը, ի տարբերություն մարդու գործունեության բոլոր բնագավառների, բազմաշերտ աշխատանք է, միայն ուսուցչի և աշակերտի միասնական, համառ ջանքերը կարող են ցանկալի արդյունք տալ:Աշակերտի լեզվամտածողությունը զարգացնելը, մտավոր աշխատանքի ուղղորդելը երկար ու համառ աշխատանք է պահանջում: Լեզվի զարգացումը կատարվում է կենդանի խոսքի միջոցով: Մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել աշակերտների կարդալու, վերարտադրելու կարողությունները, հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ: Սովորողների կարդալու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝անհրաժեշտ է նաև արտահայտիչ խոսքի և կարդալու կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք էսկսել՝ աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն: Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել: Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ: Մեթոդիկայում մշակված են աշակերտների հնչյունային լսողությունը և առոգանությունը զարգացնող շատ վարժություններ, ինչպես՝ կարդալ մտքում, արտասանել շշուկով, դանդաղ, ցածրաձայն, կամաց, բարձրաձայն և արագ:

Նախադասության մասին տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների ելևէջավորման վրա և սովորեցնել գործնականորեն տարբերել դրանց ընթերցման առանձնահատկությունները: Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական և դասարանական: Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կան նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի կետադրական ու առոգանության նշաներն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին: Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը,

կարդալու տեմպը, ռիթմը, դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում: Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում: Հենց այս փուլում էլ անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե կետադրական կամ առոգանության որ նշանն ինչպես է կարդացվում: Գրաճանաչության այբբենական և հետայբբենական շրջաններում կրտսեր դպրոցականները ընթերցանության ժամանակ դժվարանում են, չեն կարողանում տարբերակել առոգանության նշանների հնչերանգը: Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևյալ հնարին. ուսուցիչը, օգտագործելով խաղի ընթացքում հնչած երկխոսությունները, կարող է բացատրել հնչերանգը՝ պահանջելով, կրկնել հրաման, բացականչություն, հարցում արտահայտող նախադասությունները: Այնուհետև երեխաների ուշադրությունը հրավիրում է դրանցից յուրաքանչյուրի արտասանությանը:Այս կերպ գործնականորեն կարելի է յուրացնել տալ նաև բացականչության, հրաման, խնդրանք արտահայտող նախադասությունների հնչերանգը: Հետո նույն աշխատանքը կատարել նաև բնագրի վրա: Կարելի է կիրառել նաև ՏՀ տեխնոլոգիաներ. 5-7 րոպե ունկնդրել տալ գրական որևէ ստեղծագործություն՝աշակերտների ուշադրությունը հրավիրելով հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների հնչերանգին ու արտասանությանը: Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն. դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը, առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ու արտահայտությունները, վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը նայլն: Աշակերտների արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը մեծապես նպաստում են ուսուցչի կամ աշակերտների կարդալու եղանակների վերլուծությունները, որը կարելի է կատարել հետևյալ հաջորդականությամբ.

ա.Կարդալ ստեղծագործությունը՝ ուշադրություն հրավիրելով ընտրված ստեղծագործությանը վերաբերող յուրաքանչյուր մանրուքի:

բ. Որոշել ստեղծագործության ենթատեքստը՝ ի՞նչ է հեղինակը կամեցել հասկացնել ընթերցողին:

գ. Տարբերել արձակի և չափածոյի ընթերցման յուրահատկությունները: ՏՀՏ տեսալսողական սարքերի միջոցով ունկնդրել հեքիաթ և բանաստեղծություն ու համեմատել:

դ. Մտքում ընթերցելով՝ առանձնացնել այն գլխավոր հատվածները, որոնք հատկապես հուզել են, հետաքրքրել և զգացմունքներ արթնացրել:

ե. Կատարել արտասանական վերլուծություն՝ որ տողը ինչպե՞ս պետք է ընթերցել (ձայնի ինչպիսի՞ բարձրությամբ, ի՞նչ շեշտադրումներով և այլն):

Մանկավարժ – մեթոդիստների ուսումնասիրությունները, ցույց են տվել, որ այդպիսի դաս–վերլուծությունների, գրական ունկնդրումների արդյունքում աստիճանաբար ձևավորվում է երեխաների արտահայտիչ կարդալու հմտությունը, նրանք սովորում են առավել վարժ, սահուն, արտահայտիչ ու հասկանալով կարդալ բնագիրը:

Դերերով և խմբով կարդալը ևս մեծապես նպաստում է աշակերտների արտահայտիչ կարդալու կարողության զարգացմանը, քանի որ այդ դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և ըստ այդմ էլ՝ ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը: Աշակերտների՝ դերերով ընթերցելուց հետո, հանձնարարելի է, որ մեկ անգամ էլ ուսուցիչը կարդա նյութը՝ամբողջացնելով աշակերտների ընթերցանությունը, որպեսզի նրանք մեկ անգամ ևս համոզվեն, թե կարդալու ժամանակ որքան կարևոր է արտահայտչականության պահպանումը: Այս եղանակով ուսուցիչը պետք է սովորողներին զգացնել տա հեղինակի և հերոսների խոսքի հնչերանգային տարբերությունները, բացատրի, որ հեղինակի խոսքը կարդում են դանդաղ, հանգիստ տոնով, պատմողական հնչերանգով, իսկ գործող անձերի կամ կերպարների խոսքերը՝ նրանց յուրաքանչյուրին հատուկ ձայնով ու հնչերանգով: Ինչպես նաև պարզաբանի, թե ինչու է անհրաժեշտ այդպես կարդալ: Մեթոդների և միջոցների ընտրության ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի առարկայական ծրագրի բովանդակությունը, ձևավորվող հասկացությունների կամ պատկերացումների առանձնահատկությունները: Այսպես՝ հնչյունների արտասանական դրսևորումներին ծանոթանալիս անհրաժեշտ է ամենից առաջ դիտարկել աշակերտների արտաբերական առանձնահատկությունները: Աշխատելով խոսքի հնչյունային կողմի զարգացման ուղղությամբ՝ուսուցիչը պետք է հասնի այն բանին, որ աշակերտները ոչ միայն լսեն հնչյունը, այլև բառերն արտասանեն այնպես, որ պարզ և հստակ լսելի լինեն բոլոր հնչյունները: Հնչյունների արտասանությունն ու յուրացումը կատարվում է գործնական

վարժությունների միջոցով: Վարժությունների օրինակներն ու բնագրերը ընտրվում են՝ հաշվիառնելով սովորողների բարձրաձայն արտասանելու, լսողական ընկալման և մտապահման առանձնահատկությունները: Դրանք չպետք է լինեն երկար, միատեսակ և հոգնեցնեն աշակերտներին: Վարժությունների իրականացումը պետքէ լինի համակարգված և իրականացվի ուսուցչի օգնությամբ: Արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորումը նպատակահարմար է իրականացնել և՛ հատուկ, և՛ հարակից վարժությունների միջոցով: Հատուկ վարժությունները կատարվում են անմիջապես մայրենիի դասերին՝ նպաստելով արտահայտիչ ընթերցելու կարողությունների զարգացմանը, իսկ հարակից վարժությունները անցկացվում են լեզվական որևէ նյութ բացատրելու ընթացքում, երբ ուսուցիչը միևնույն ժամանակ երեխաներին հանձնարարում է բարձրաձայն ընթերցել նախադասությունը՝ պարզ, հստակ և արտահայտիչ: Տվյալ դասի համար այդ թեման հիմնականը չէ, բայց ուսուցիչը, օգտվելով իրավիճակից, բնագրի ընթերցմանը զուգընթաց՝ հիշեցնում է արտահայտիչ խոսքի պահանջները: Արտահայտիչ կարդալու կարողության զարգացման հատուկ վարժանքներից է տրամադրության բառարանը, նկարի բառային նկարումը, մրցակցային ընթերցանությունը:

՝ Տրամադրության բառարան: Այս, այսպես կոչված բառարանում, գրելով ընթերցվող բնագրի «ուրախ», «տխուր», «երջանիկ», «ոգևորված», «մեղմ» բառերը վերլուծում են նյութը և եզրակացնում, թե հեղինակն ինչ զգացմունքներով ու հույզերով է գրել տվյալ ստեղծագործությունը: Այնուհետև ընթերցելիս արդեն ձգտում են արտահայտել այդ տրամադրությունները:

Նկարի բառային նկարում: Այս վարժությունն անվանում են«բառային նկարչություն»: Աշակերտները փորձում են բառերով նկարագրել պատկերվող իրադարձությունը, գործող անձերին, առանձնացնում են ստեղծագործության մի հատված՝գույներով ներկայացնելու համար: Այս նկարչություն-վարժությունը զարգացնում է նաև աշակերտների երևակայությունը: Մրցակցային ընթերցանությանն ու արտահայտիչ ընթերցելուն նախապատրաստվելիս սովորողը պետք է կարդա ներևակայությամբ պատկերացնի ընթերցվող բնագիրը, որոշակի վերաբերմունք դրսևորի նկարագրվող դեպքերի նկատմամբ, որոշի կարևոր մտքերն ու ասելիքն ամբողջացնող տողերը, ընտրի արտահայտչամիջոցները, տրամաբանական շեշտերի տեղը, նշի դադարները, տեմպը և այլն: Մրցակցային ընթերցման ժամանակ աշակերտը բնագիրն ընթերցում է

ունկնդիրների համար և հաղորդակցվում է նրանց հետ: Այսպիսի վարժությունները զարգացնում են երեխաների արտահայտիչ կարդալու գործնական հմտությունները: Նրանք փորձում են արտահայտել իրենց տպավորությունները, մտքերը, հուզմունքները՝ ձեռք բերելով գեղեցիկ և տպավորիչ խոսք կառուցելու կարողություն:

Ներկայացնենք արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման գործընթացն ըստ դասարանների:

Մայրենիի դասը մի շարք նպատակներ է հետապնդում՝

ա. Կարդալու կարողության ամրակայում և կատարելագործում,

բ. Մայրենի լեզվի իրողությունների գործնական ուսուցում,

գ. Աշխարհաճանաչողական գիտելիքների զարգացում,

դ. Համակողմանի դաստիարակություն:

Խոսքի պահանջմունքը երեխայի մոտ դպրոց ընդունվելուն պես մեծանում է: Նրա խոսքը դառնում է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ամբողջ դասարանի ուշադրության առարկա և բոլոր առկա թերություններն անմիջապես նկատվում են և ուղղվում: Երեխան առաջին անգամ սկսում է սովորել լեզուն՝ որպես առարկա: Քերականական կանոնները, որոնցից նա մինչ այդ օգտվում էր զուտ գործնականում, դառնում են հատուկ ուսումնասիրության նյութ: Երեխային բացատրում են, թե ինչու է հարկավոր խոսել և գրել այսպես, և ոչ թե այնպես: Դպրոցում առաջին անգամ տրվում է խոսքի էլեմենտների վերլուծությունը, խոսքային տեքստը բաժանվում է նախադասությունների, բառերի, վանկերի, հնչյունների, տառերի, տրվում է այդ էլեմենտներից յուրաքանչյուրի բացատրությունը: Ընդունվելով դպրոց՝ երեխան առաջին անգամ ծանոթանում է իր համար նոր՝ գրավոր խոսքի ձևին: Այս խոսքը ձևավորվում և զարգանում է բանավոր խոսքի հիման վրա: Դպրոցական շրջանը շարունակվում է բառապաշարի հարստացմամբ ու կուտակմամբ, աճում է նրա որակական բաղադրությունը, կոնկրետացվում և ընդլայնվում է արդեն առկա բառերի իմաստը: Գրավոր խոսքը բանավոր խոսքի վերարտադրումն է գրի միջոցով: Այն դրսևորվում է տվյալ լեզվի այբուբենի միջոցով, որին օգնության են գալիս նաև կետադրությունը և վայելչագրությունը, որոնք պայմաններ են ստեղծում գրավոր խոսքը բանավոր խոսքին մոտեցնելու համար: Իր մշակվածությամբ, ճշտությամբ, բառապաշարի հարստությամբ ու գեղեցկությամբ, լեզվական օրենքների ու օրինաչափությունների ճիշտ կիրառությամբ գրավոր խոսքն ավելի բարձր ու անթերի է, քան բանավոր խոսքը, սակայն այն իր արտահայտչական հնարավորություններով շատ

ավելի ցածր է, քան բանավոր խոսքը և բացարձակորեն հենվում է բանավոր խոսքի վրա: Այս է պատճառը, որ դպրոցական տարիներին մեծ ուշադրություն են դարձնում բանավոր խոսքի զարգացմանը: Եթե բանավոր խոսքի հիմնական տարբերիչ ու առանձնահատուկ կողմեր են վայելչագրությունը, ուղղագրությունը և կետադրությունը՝ առանց որի գրավոր խոսքը զրկված կլինի հաղորդակցման ընդհանուր միջոց լինելու առանձնահատկությունից, ապա բանավոր խոսքի կարևոր բաղադրիչներից են բառապաշարը, քերականությունը և խոսք կառուցելու կարողությունը:

Գրավոր խոսք

Ելնելով մանկավարժության ժամանակակից մեթոդական հարուստ ժառանգությունից՝ գրավոր խոսքի զարգացման համար կարևորվում է արտագրության գործածությունը: Արտագրությունը լինում է երկու տեսակ՝ ընդօրինակման և ստեղծագործական բնույթի կամ առանց բնագրի փոփոխման և բնագրի փոփոխումով:Արտագրելիս աշակերտը օրինակի վրա տեսնում է գրվող բառի պատկերը, արտասանում, ուրեմն նաև լսում է բառի հնչյունական կազմը, այն գրելու համար ձեռքի որոշակի շարժումներ է անում, որոնք տեսնում և զգում է և, ի վերջո, տեսնում է իր գրած առանձին տառերի համադրումից ստացված նոր բառապատկերը: Տեսողական, լսողական ու մկանաշարժողական ընկալումների այսպիսի զուգակցման շնորհիվ աշակերտի մեջ բառաձևերի ավելի ճիշտ ու կայուն մտապատկերներ են ստեղծվում: Արտագրելիս աշակերտը կասկածի կամ երկընտրանքի մեջ չի ընկնում, որովհետև տեսնում է բառն ու նրա գրության ձևը և ցանկացած պահին կարող է իր գրածի ճշտությունն ստուգել: Այս առումով արտագրությունն ուսուցողական մեծ հնարավորություններ ունի:

Արտագրության նյութերը ոչ միայն ուսուցանվող ուղղագրական ու քերականական կանոններով պետք է հագեցած լինեն, այլև բովանդակության ու լեզվական տեսակետից՝ աշակերտներին հասանելի: Ընդօրինակման արտագրություն կատարելիս աշակերտը առաջադրված բնագիրն արտագրում է նույնությամբ, ուղղակի ընդօրինակում է այն՝ առանց փոփոխություն կատարելու: Ընդօրինակման, արտագրության հիմնական նպատակը մի կողմից աշակերտների մեջ գրելու կարողության և արտագրելու տեխնիկայի զարգացումն է, իսկ մյուս կողմից՝ ձեռագրի վայելչագրական կողմի մշակումն ու կատարելագործումը: Ընդօրինակման արտագրություններն ունեն չորս

տարատեսակ. ա) արտագրություն տետրում տրված օրինակից, բ) արտագրություն վայելչագրական օրինակներից, գ) արտագրություն գրատախտակից, դ) արտագրություն գրքից: Ընդօրինակման արտագրությունների այս չորս տարատեսակների անցկացման ժամանակ էլ ուսուցիչը պետք է հետևի, որ աշխատանքը բառացի ընդօրինակում չդառնա, այլ աշակերտներն արտագրեն հասկանալով, այսինքն իմանան, թե ինչ են անում և ինչպես են անելու: Լայն կիրառություն ունեն ստեղծագործական բնույթի կամ բնագրի փոփոխումով կատարվող արտագրությունները, որոնք հանձնարարելի են տարրական դպրոցի բոլոր դասարաններում: Այս արտագրություններն ուղեկցվում են ուղղագրական, լեզվական կամ տրամաբանական որևէ առաջադրանքի կատարումով: Բառերն ընտրել և արտագրել առաջադրված նկարների հերթականությամբ.այպիսի արտագրության համար առաջադրվում է նկարների մի շարք, որի տակ խառը ձևով գրված են լինում նկարներին համապատասխանող բառերը: Աշակերտները դիտում են նկարները, պատմում դրանց մասին, կարդում են բառերը և ապա սկսում արտագրել՝ պահպանելով նկարների հերթականությունը: Արտագրել՝ պահանջված բառերն ընտրելով.այսպիսի արտագրությունը կոչվում է նաև ընտրովի արտագրություն: Նման առաջադրանք է տրվում անցած ուղղագրական կամ քերականական նյութերի հիման վրա: Աշակերտը սկզբում պետք է կարդա ամբողջ նյութը, իսկ հետո առանձին նախադասությունները, բայց արտագրի միայն պահանջված բառերը: Բազմաթիվ բառերի մեջ գտնելով ու արտագրելով անհրաժեշտ բառը՝ երեխան սովորում է ընտրություն ու միևնույն տիպի առարկաների պարզ դասդասում կատարել, որը նպաստում է բառապատկերի կայուն մտապահմանը:

Արտագրել տրված բառերը խմբավորելով.այսպիսի աշխատանքներ տալու համար կարելի է ընտրել անցած ուղղագրական ու քերականական կանոնորին վերաբերող բառերից կամ շրջապատի առարկաների ու երևույթների անուններից կազմված կամ դրանցով հարուստ բնագրեր:Արտագրել ՝ընդգծելով պահանջված բառերը կամ փակագծերում գրելով ընդգծված բառին փոխարինող բառերը.այս աշխատանքը նույնանում է ընդօրինակման արտագրության հետ, սակայն նրանից բարդ է նրանով, որ արտագրելուց հետո կամ արտագրելու ընթացքում աշակերտը գտնում է ու ընդգծում պահանջված բառերը, որոնք կարող են վերաբերել անցած ուղղագրական կամ քերականական կանոններին, շրջապատի առարկաներին ու երևույթներին: Կարելի է հանձնարարել նաև ենթակաները կամ ստորոգյալները փոխարինել համապատասխան

բառերով՝ առանց փոխելու նախադասության կառուցվածքը: Աշակերտների գրավոր խոսքի զարգացման համար կարելի է հանձնարարել արտագրել՝ ա)պատասխանելով տրված հարցերին, բ) լրացնել բաց թողնված տառերը կամ բառերը, գ)արտագրել՝ փոխելով բնագիրը, դ) վերականգնել ձևափոխված բնագիրը: Այսպիսի աշխատանքի ժամանակ հանձնարարվում է արտագրելիս փոխել բայի դեմքը, թիվը, ժամանակը, գոյականների և դերանունների թիվը՝ առաջին դեմքը դարձնելով երրորդ, եզակի թիվը՝ հոգնակի և այլն:

Թելադրություն:

Գրավոր աշխատանքների ամենագործածական տեսակներից մեկը թելադրությունն է: Թելադրություն գրելը լսողության և գրային նշանների միջոցով բառերի, բառակապակցությունների և նախադասությունների վերածելն է, իսկ խոսողի վերաբերմունքը ճիշտ արտահայտելու համար՝ կետադրական նշանների, կանոնների ճիշտ գործածության հմտությունը: «Թելադրություն գրելու կարողությունը մարդու գրագետ լինելու չափանիշներից մեկն է, որովհետև կյանքում մարդ ավելի շատ առիթ է ունենում թելադրությամբ կամ, ավելի ճիշտ, ինքնաթելադրությամբ գրելու, քան՝ արտագրելու, ուստի այդ կարողությունը դեռևս առաջին դասարանից պետք է զարգացնել երեխաների մեջ և հետագա ամբողջ ուսումնառության շրջանում մշակել ու կատարելագործել»[1]: Թելադրության տարբեր ձևերը հաջողությամբ և նպատակային անցկացնելու համար հայոց լեզվի ուսուցիչը պետք է տեղյակ լինի դրանց բազմազան տեսակներին, նախապատրաստման և անցկացման մասին, իմանա, թե դրանք ուղղագրական կամ կետադրական որ տիպի սխալների կանխելու համար պետք է անցկացվեն: Ուսուցողական թելադրությունները ուղղագրական հմտության զարգացման գործում բացառապես ուսուցողական նպատակ ունեն, իսկ թեմատիկ թելադրությունները՝ գերազանցապես աշակերտների՝ ուղղագրական և կետադրական կանոնների յուրացման աստիճանը պարզելու: Թելադրությունների տեսակները տարբեր են:

Նախազգուշական թելադրություն: Սա թելադրության այն տեսակն է, որի ժամանակ ուսուցիչը նախօրոք ընտրած տեքստից գրատախտակին գրում է այն բառերը, որոնք կարող են հնարավոր սխալների տեղիք տալ: Այնուհետև նա աշակերտներին

[1] Աշոտ Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 443:

հանձնարարում է ուշադիր նայել և հիշողության մեջ պահել այդ բառերի ճիշտ գրությունը: Այնուհետև ուսուցիչը աշակերտներից պահանջում է կազմել բանավոր և գրավոր նախադասություններ՝ օգտագործելով այդ բառերը: Նախապատրաստական այս աշխատանքներից հետո, երբ ուսուցիչը համոզվում է, որ ուսուցման ենթակա ուղղագրական կանոններն աշակերտներն արդեն յուրացրել են, սկսում է թելադրել նյութը՝ գրատախտակից չմաքրելով գրված բառերը: Այսպիսի տեսակները նպատակ ունեն կանխել աշակերտների հնարավոր ուղղագրական սխալները: Այդ նպատակով էլ ուսուցիչը պետք է միշտ պատեհ առիթը օգտագործի, որ աշակերտները սխալների տեղիք տվող բառերը տեսնեն, կրկնեն ու դրանցով կազմված նախադասություններով վարժություններ կատարեն: «Ուսուցողական թելադրությունը հենց նրանով է ուսուցողական, որ ուսուցիչը ոչ միայն գրավորին նախապատրաստվելու շրջանում, այլև թելադրելու ընթացքում ուսուցանի»[2]:

Նախազգուշական թելադրության այս տեսակը կարելի է ծառայեցնել ուղղագրական բոլոր տիպի սխալները կանխելու, բայց առավելապես ավանդական և քերականական սխալները վերացնելու նպատակին: Այս թելադրությունը օգտակար է կրտսեր և միջին (հիմնական) դպրոցում՝ 1-9-րդ դասարաններում:

Բացատրական թելադրության ժամանակ ուսուցիչը բացատրում, ավելի ճիշտ՝ վերհիշել է տալիս տեքստի՝ բարդ ուղղագրություն ունեցող բառերի գրությունը, որի համար էլ թելադրությունը կոչվում է բացատրական: Թելադրության տեքստը պետք է հագեցած լինի նախորդ դասերին սովորած ուղղագրական կանոններին համապատասխան բառերով, որպեսզի ուսուցիչը, հենվելով դրանց վրա, աշակերտների հիշողության մեջ կայունացնի այս կամ այն ուղղագրական կանոնը:

Բացատրական թելադրության մի տեսակն էլ մեկնողական թելադրությունն է: Մեկնողական թելադրության նախապատրաստական աշխատանքները նույն են, սակայն թելադրության ժամանակ համապատասխան բացատրությունները տալիս է ոչ թե ուսուցիչը, այլ ուսուցչի հանձնարարությամբ՝ աշակերտները: Թելադրելն սկսելուց առաջ ուսուցիչն աշակերտներից մեկին հանձնարարում է, որ բացատրի կարդացած նախադասության մեջ գործածված ուղղագրական կամ կետադրական կանոնները: Դրանից հետո ուսուցիչը բոլորին հանձնարարում է գրել, իսկ ինքը երկրորդ անգամ

[2] Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու, 5-9-րդ դասարաններ, Երևան, 2009, էջ 3:

դանդաղ կարդում է նախադասությունը: Երբ հասնում են ուղղագրական բարդություն ունեցող բառին կամ կետադրական դեպքին, աշակերտներից մեկը բոլորին հիշեցնում է համապատասխան կանոնը, իսկ
ուսուցիչը հետևում է, որ աշակերտներն անսխալ գրեն: Այս թելադրությունը կարելի է հանձնարարել 5-9-րդ դասարաններում:
Ինքնաթելադրությունը ուսուցիչը հանձնարարում է դասարանում նախօրոք մշակած տեքստի գեղեցիկ հատվածը կամ ոտանավորը անգիր անել տանը և դասարանում հիշելով՝ գրել այն: Այս թելադրությունը աշակերտից շատ ջանքեր է պահանջում, որպեսզի նա տանը այնքան աշխատի, որ համոզվի, որ ոչ մի տեսակի սխալ չի կատարում: Ինքնաթելադրությունը գրելուց առաջ ուսուցիչը մի քանի աշակերտի արտասանել է տալիս, որոշում են կետադրական նշանների տեղը և տեսակը, ուշադրության արժանացնում ուղղագրական դժվարություն պարունակող բառերը, կատարում ուղղախոսական վարժություններ: Այնուհետև աշակեևտները գրում են ինքնաթելադրությունը, իսկ ուսուցիչը հետևում է յուրաքանչյուրին և բացատրություններով՝ կանխում նրանց սխալները: Գրելուց հետո աշակերտները առանց գրքի ստուգում են ինքնաթելադրությունները, որից հետո հավաքում են տետրերը: Թելադրության այս տեսակը տրվում է 5-6-րդ դասարաններում: Թելադրության մի տեսակ էլ ազատ թելադրությունն է: Ազատ թելադրության տեքստն ընտրվում է տվյալ դասարանի համակազմին մատչելի, ուղղագրական կանոններով հագեցած սյուժե ունեցող ոչ ծավալուն նյութերից: Դասի սկզբում ուսուցիչը մեկ անգամ կարդում է թելադրության ամբողջական տեքստը, գրատախտակին գրում առաջին պարբերությունում եղած ծրագրային ուղղագրություն ունեցող բառերը (օդանավ, ընթացք, էքսկուրսիա, Օդեսա, Օգսեն), ապա դրանց մասին հակիրճ հիշեցում կատարելով՝ թողնում է գրատախտակին: Դրանից հետո նա միայն մեկ անգամ կարդում է առաջին պարբերությունը և պահանջում գրել բովանդակությունը՝ պարտադիր կերպով օգտագործելով գրատախտակին գրված բառերը: Այդ ընթացքում ուսուցիչը հետևում է աշակերտներին, օգնում նրանց, որպեսզի պարբերության բովանդակությունը չաղարտվի և ուղղագրական սխալները կանխվեն: Նույն ձևով թելադրվում են տեքստի մյուս պարբերությունները ևս: Վերջում ստուգիչ ընթերցում չի կատարվում: Թելադրության այս տեսակը հավասարապես պետք է ծառայեցնել աշակերտների՝ նյութի բովանդակությունը վերարտադրելու (փոխադրելու), նրա մեջ ստեղծագործական

տարր մտցնելու կարողությունները և ուղղագրական ունակությունը զարգացնելու նպատակին:

Ստեղծագործական թելադրությունը ևս ուսուցչից պահանջում է նախապատրաստման և անցակացման հետևողական աշխատանք: Գրավորից առաջ ուսուցիչը պետք է ընտրի ուղղագրական հագեցվածություն ունեցող 3-5 թեմատիկ բառախումբ: Այդ բառախմբերը կարելի է դուրս գրել ամբողջական տեքստից կամ կազմել աշակերտների հետ միասին: Եթե բառերը տեքստից չեն ընտրված, այդ դեպքում ուսուցիչը պարտավոր է գրելուց առաջ կազմել պահանջվող ամբողջական տեքստը: Յուրաքանչյուր բառախումբ պետք է կազմված լինի 3-4 բառից կամ կապակցությունից: Գրելուց առաջ ուսուցիչը բոլոր բառախմբերն առանձին-առանձին պետք է գրի գրատախտակին, աշակերտների ուշադրությունը հրավիրի բառերի ուղղագրության վրա, բացատրի իմաստով անծանոթ բառերը (առաջին փուլ), որից հետո պահանջի առանձին թերթիկի վրա, առաջին խմբի բառերն օգտագործելով, կազմել փոքրիկ տեքստ (երկրորդ փուլ): Աշակերտների ստեղծագործելու ընթացքում ուսուցիչը պարտավոր է մոտենալ յուրաքանչյուրին, խորհուրդներով օգնել (երրորդ փուլ): Երբ բոլորն ավարտում են, ուսուցիչը տարբեր առաջադիմություն ունեցող մի քանի աշակերտների կարդալ է տալիս նրանց կազմած տեքստերը, դրանցից ընտրում լավագույնը և աշակերտների մասնակցությամբ ավելի հղկում ու կանոնավոր տեսք տալիս (չորրորդ փուլ): Միայն դրանից հետո այդ նույնը թելադրում է բոլորին (հինգերորդ փուլ): Մյուս բառախմբերի տեքստերը նույնպես այդպես են կազմվում: Ընդհանուր ուժերով ստեղծված ամբողջական տեքստը վերջում պետք է մեկ անգամ կարդալ, որ աշակերտները ստուգեն իրենց գրածը (վեցերորդ փուլ), որից հետո հավաքել տետրերը:

Ընտրովի թելադրությունն օգտագործվում է՝ որպես ընթացիկ վարժություն, ուսուցողական և ստուգողական գրավոր: Ընդ որում կարելի է կատարել գրավոր և բանավոր: Այս տեսակի միջոցով խորացվում են աշակերտների և՛ ուղղագրական, և՛ քերականական գիտելիքները: Թելադրության այս տեսակը մյուս գրավորների համեմատությամբ պետք է փոքր լինի, հագեցած ուղղագրական կանոններով և ամրապնդի անցած քերականական նյութերը: Կարճ տեքստը բոլորին հնարավորություն է տալիս լսել և լսածը գրի առնել. չէ՞ որ աշակերտը պետք է լսի ամբողջական նախադասությունը, մտապահի, նրանից մտովի ընտրի պահանջված բառը կամ բառերը, հետո դրանք գրի: Անցած նյութի շուրջ ընտրած ուսուցողական նյութը թելադրելուց

առաջ ուսուցիչը, գրում է վերնագիրը «Ընտրովի թելադրություն անորոշ, անկատար և ապակատար դերբայների շուրջ» կամ «Ընտրովի թելադրություն մակբայների շուրջ» և այլն: Այնուհետև մի քանի անգամ դանդաղ կարդում է առաջին նախադասությունը, իսկ այդ ընթացքում աշակերտները պետք է մտովի գտնեն վերնագրի պահանջին համապատասխանող բառերը և գրեն տետրում: Թելադրելն ավարտելուց հետո ուսուցիչը աշակերտներից պահանջում է ուշադիր հետևել տետրերին, իսկ ինքը դանդաղ կարդում է տեքստի առաջին նախադասությունը, ապա հարցնում աշակերտներին, թե ո՞ր բառերն են դուրս գրել և ի՞նչ պատճառաբանությամբ: Եթե պարզվում է, որ կարդացող աշակերտները ճիշտ են դուրս գրել, մյուսներից պահանջում է իրենց գրածը համապատասխանեցնել դրան: Այսպիսով, բոլոր աշակերտներին մասնակից դարձնելով՝ ուսուցիչը ուսուցողական աշխատանքները կատարում է տեքստը թելադրելուց առաջ, թելադրելու ընթացքում, թելադրելն ավարտելուց հետո:

«Ընտրովի թելադրությունը՝ որպես ուսուցողական գրավոր, խորհուրդ է տրվում կիրառել թեմայի ուսուցման ընթացքում, որը կարելի է կատարել մի քանի ձևով.

1. Ուսուցիչը պահանջում է գրքում մատնանշված հատվածն ամբողջապես արտագրել տետրում և ընդգծել վերնագրով պահանջվող բառերը.

2. Մատնանշելով գրքի համապատասխան հատվածը՝ պահանջում է, առանց տետրում արտագրելու, բանավոր ասել պահանջվող բառերը՝ նրանց մասին համապատասխան բացատրություններ տալով.

3. Ընտրված տեքստը թելադրել նախադասություն առ նախադասություն՝ պահանջելով տետրում գրել միայն հանձնարարելի բառերը»3:

Թեման ավարտելուց հետո, յուրացումն ստուգելու նպատակով, տրվում է թեմատիկ գրավոր աշխատանք: Վերոհիշյալ թելադրության բազմազան տեսակները հազվադեպ են անխառն օգտագործվում: Դրանք հաճախ դասի ընթացքում զուգակցվում են, այդ պատճառով էլ կոչվում են համակցված. օրինակ՝ նախազգուշական-բացատրական, ստեղծագործական-բացատրական և այլն: Նման համակցումները մեծ օգուտ են բերում ուղղագրության ուսուցման գործին, որովհետև միաժամանակ գործում են աշակերտի

տեսողական և լսողական զգայարանները: Համակցված թելադրությունները պետք է հաճախակի տալ հիմնական դպրոցում[3]:

Կա նաև բառային թելադրություն, երբ տնային աշխատանքները դասարանում վերլուծելիս առանձին բառեր են գրում գրատախտակին և կամ դասի սկզբից մի 5 րոպե տրամադրում են ուղղագրական բառացանկեր կազմելուն: Այս տեսակը բացառապես ուղղագրական նպատակ է հետապնդում: Բառային թելադրության ժամանակ ոչ թե տեքստ է թելադրվում, այլ՝ ուղղագրական բառախումբ:

Բառարան-թելադրությունը ստեղծագործական և բացատրոկան թելադրությունների ձևով անցկացվող աշխատանք է՝ առաջարկված Ա.Ա. Ամիրյանի կողմից: Այս գրավորի ժամանակ աշակերտը մեկնում է, բացատրում բառի իմաստը, ուղղագրությունը, կազմում նախադասություններ: Աշակերտներին տրվում է 5-10 բառ, որպեսզի բացատրեն դրանց իմաստը, ուղղագրությունը և բառարանի ձևով գրեն տետրում, դրանցով կազմեն նախադաություններ: Ուսուցիչը կարդում է բնագիրը, հարցնում է բառերի իմաստը, անծանոթ բառերը ինքն է բացատրում, գրել է տալիս գրատախտակին, դրանցով նախադասություններ կազմել տալիս, ապա մաքրել է տալիս գրատախտակը և թելադրում՝ պահանջելով, որ յուրաքանչյուր բառ գրեն նոր տողից: Բոլոր բառերը գրելուց հետո աշակերտների միջոցով մեկ առ մեկ բացատրվում է նրանց իմաստը, կազմությունը, տրվում են նրանց համանիշները: Թելադրության այս տեսակը հիմնականում ծառայում է աշակերտների բառապաշարի հարստացմանը: Յուրաքանչյուր թեմա անցնելուց հետո նպատակահարմար է տալ թեմատիկ (ստուգողական) թելադրություն, որի նպատակն է՝ պարզել, թե ուսուցանված ուղղագրական և կետադրական կանոններն ինչ չափով են յուրացրել աշակերտները. չէ՞ որ այդ կանոնները յուրացնելու շնորհիվ է աշակերտի մոտ զարգանում թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքը: Թեմատիկ թելադրությունն ուսուցիչը վարում է առանց ուսուցչական սեղանի մոտից հեռանալու, առանց աշակերտների հարցերին պատասխանելու:Թելադրելիս ուսուցիչը ամբողջ տեքստը կարդում է բնակակոն արագությամբ, ապա սկսում է նախադասություն առ նախադասություն թելադրել: Եթենախադասությունները երկար են, յուրաքանչյուր նախադասություն բնականոն դադարներով կարելի է կարդալ երկու կամ երեք անգամ: Արգելվում է բառ առ բառ կամ

[3] ՎիրաբյանՆ., ՄարգարյանԼ., Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու, 5-9-րդ դասարաններ, Երևան, 2009, էջ 9:

վանկատելով կարդալը, ուղղագրական դժվարություն ներկայացնող հնչյունը շեշտելը կամ ուղղախոսական կանոնների խախտումը: Թելադրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի միջին արագությամբ գրող աշակերտին՝ չանտեսելով ամենադանդաղ գրող աշակերտներին, որոնց աստիճանաբար պետք է հասցնի միջին մակարդակի: Թելադրությունը վերջացնելուց հետո ուսուցիչը մեկ անգամ ևս դանդաղ կարդում է ամբողջ տեքստը, որպեսզի աշակերտները ստուգեն իրենց գրածը, ապա անմիջապես հավաքում է տետրերը:

Փոխադրություն: Աշակերտի գրավոր խոսքի զարգացման լավագույն միջոցներից մեկը փոխադրությունն է: Փոխադրել նշանակում է վերապատմել որևէ պատմություն: Այն զարգացնում է աշակերտի տրամաբանական մտածողությունը, լսողությունը, հիշողությունը, վերարտադրելու կարողությունը, մտքերը ձևակերպելու, հիմնականը երկրորդականից տարբերակելու և շարադրելու ունակություններ, հարստացնում է աշակերտի բառապաշարը դարձվածներով, առածներով, քերականական և ոճական ձևերով: Փոխադրությունները լինում են ընթացիկ (ուսուցողական) և թեմատիկ (ստուգողական): Փոխադրության նյութը կարելի է քաղել գրական ստեղծագործություններից, նկարներից, ուսումնական կինոնկարներից: Կարելի է չափածո ստեղծագործությունները արձակի վերածել: Փոխադրության նյութի ծավալը սովորաբար լինում է 5-7-րդ դասարաններում՝մինչև 300 բառ, 8-9-րդ դասարաններում՝մինչև 500 բառ: Ավագ դպրոցում ևս տրվում են փոխադրություններ:

Ուսուցիչը ուսուցողական (ընթացիկ) փոխադրությունների նյութը դասարանում կարդում է երկու անգամ՝ պահպանելով ուղղախոսության բոլոր օրինաչափություններն ու կանոնները, ապա բացատրում է անծանոթ և դժվար ուղղագրություն ունեցող բառերը: Այդ բառերը գրվում են գրատախտակին և հանձնարարվում, որ դրանք աշակերտներն օգտագործեն գրավոր աշխատանքում: Բառերի բացատրությունից հետո սովորողների հետ համագործակցային մեթոդների կիրառմամբ մշակվում է բնագիրը, կազմվում պլան և գրվում գրատախտակին: Այնուհետև մեկ-երկու աշակերտի պատմել է տալիս, որից հետո բոլորը սկսում են գրել: Փոխադրել կարելի է և՛ պլանով, և՛առանց պլանի:Պլանի կետեր կարող են լինել առաջադրված հարցերը: Կարելի է նաև պլանի կետեր մշակել աշակերտների մասնակցությամբ: Աշակերտների պատմելու ժամանակ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի, որ տեքստը հագեցնեն պատկերավոր միջոցներով (մակդիր, փոխաբերություն, համեմատություն), դարձվածքներով,

առածներով, ասացվածքներով ու թևավոր խոսքերով: Բոլորովին այլ ձևով է անցկացվում թեմատիկ փոխադրությունը, քանի որ այդ դեպքում ստուգվում են աշակերտների՝նյութը պլանավորելու, շարադրելու, արդեն սովորած քերականական օրինաչափությունները գրավոր խոսքի մեջ կիրառելու կարողությունները, ապա ուսուցիչը նյութը կարդում է երկու անգամ, աշակերտներին բացատրում անծանոթ բառերը, այնուհետև հանձնարարում գրել: Աշակերտներն իրենք են կազմում փոխադրության պլանը: Փոխադրության անցկացման ընթացքում ուսուցիչն աշակերտներին աստիճանաբար պետք է վարժեցնի, որ նրանք կարողանան նյութի փոխադրմանը զուգընթաց կատարել նաև սեղմ բնութագրումներ ու նկարագրած երևույթների մարդկային արարքների, վարքագծի վերլուծություններ, գնահատում, միաժամանակ անկաշկանդ արտահայտել սեփական վերաբերմունքն այդ ամենի նկատմամբ: Պատմողական բնույթի մանրամասն փոխադրությունը տրվում է բոլոր դասարաններում: Ուսուցիչը ընթերցում է բնագիրը, աշակերտների մասնակցությամբ մշակում այն, տեքստի բովանդակության մասին անցկացնում համառոտ զրույց և հանձնարարում գրել:

Պատմողական բնույթի հակիրճ փոխադրությունը ևս տրվում է բոլոր դասարաններում, հիմնականում՝ուսուցողական: Ընտրվում է համեմատաբար ծավալուն բնագիր, որում քիչ են երկրորդական նշանակության դեպքերն ու դեմքերը: Ուսուցիչը կարդում է նյութը, բացատրում անծանոթ բառերն ու բառակապակցությունները, անփոփոխ ձևով՝առանց մանրամասների պատմել է տալիս բնագրի բովանդակությունը և հանձնարարում գրել:Այս տեսակի փոխադրության նպատակն է աշակերտին վարժեցնել ամբողջ ի մեջ գլխավորը տեսնելու, իր մտքերը սեղմ ու հակիրճ արտահայտելու այնպես, որ բնագրի սեղմումը չխաթարի նրա բովանդակությունը:

Ընտրովի փոխադրությունը կարելի է օգտագործել աշակերտներին ծանոթ հերոսների կյանքի ու գործունեության դրվագներով հարուստ բնագիր: Ընտրված բնագիրը ուսուցիչը կարդում է, բացատրում անծանոթ բառերն ու բառակապակցությունները և հանձնարարում գրել: Աշակերտներն ընտրում են բնագրի՝ իրենց համար առավել հետաքրքրական բաժինը, կազմում պլան և գրում:

Փոխադրության մի տեսակ է բանավոր փոխադրությունը, որի նպատակն է աշակերտին սովորեցնել իր կամ ուրիշի կարդացածը տրամաբանված և հետրողականորեն, կապակցված և բանավոր վերարտադրելուն: Փոխադրության այս տեսակը նպաստում է

աշակերտների հիշողության, խոսելու, պատմելու կարողությունների զարգացմանը, հարստացնում նրանց բառապաշարը, խոսքը դարձնում ավելի տպավորիչ ու հուզական: Ստեղծագործական փոխադրության նախապատրաստման և անցկացման առավել տարածված ձևերն են՝

ա)ուսուցիչը դասարանում ընթերցում է անծանոթ պատմվածքի մի մասը և հանձնարարում շարունակել այն և դնել վերնագիրբ)ուսուցիչն ընթերցում է բնագիրը, աշակերտների մասնակցությամբ մշակում և հանձնարարում գրել՝ հարստացնելով այն նոր դրվագներով, հերոսների նոր արարքներով ու գործողություններով

գ)ուսուցիչն ընթերցում է բնագիրը, աշակերտների ակտիվ մասնակցությամբ մշակում և պահանջում է գրավորում արտահայտել սեփական վերաբերմունքը նկարագրվող երևույթի, կերպարների, արարքների և վարքագծի նկատմամբ, տալ դրանց գնահատականը

դ)ուսուցիչը ցուցադրում է համեմատաբար մատչելի դիպաշարային (սյուժետային) նկար և պահանջում է գրել կամ պատմել նրա մասին:

Անհրաժեշտ է ընտրել այնպիսի բնագիր, որ աշակերտի մեջ խորհելու, հակադրվելու կամ նմանվելու տրամադրություն առաջացնի, հնարավորություն ստեղծի սեփական դիտումների ու նկատառումների հիման վրա կյանքի համանման ու հակադիր օրինակներով հարստացնելու այն: Աշակերտի լեզվական ունակությունների, հմտությունների զարգացման աշխատանքը պետք է զուգակցել նրան ում հասարակական կյանքի նկատմամբ քաղաքացիական ակտիվ դիրքորոշում մշակելու խնդրի լուծմանը:

Շարադրություն: Գրավոր աշխատանքների հիմնական տեսակներից մեկն էլ շարադրությունն է, որը կարևոր նշանակություն ունի ինչպես ուղղագրական, այնպես էլ գրավոր խոսքի ուսուցման համար: Դա է պատճառը, որ շարադրությունն իր ուրույն տեղն ունի ուսուցման բոլոր աստիճաններում, իհարկե, յուրաքանչյուր աստիճանում փոխելով իր բովանդակությունը, ծավալը, թեմատիկան ու նպատակադրումը:

Ուսուցողական շարադրությունը ևս պիտի գրել դասարանում ուսուցչի և աշակերտի համատեղ և մանրակրկիտ աշխատանքից հետո: Մտքերը գրավոր շարադրելը դժվար գործ է, և սրան աշակերտին պետք է սովորեցնել: Շարադրություն գրելիս աշակերտը ոչ միայն կապակցված խոսք կառուցելու կարողություն է ձեռք բերում, սովորում է կանոնավոր ու գրագետ գրել, այլև մտավոր տեսակետից ևս զարգանում ու

հասունանում է, ամրապնդում է իր իմացածը և նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերում: Շարադրությունը մշակում ու ազնվացնում է նաև աշակերտի զգացմունքները, նպաստում նրա բարոյական կերպարի ձևավորմանը: Երբ աշակերտը շարադրություն է գրում սիրած նյութի՝ դեպքի, հերոսի, որևէ ապրումի, հայրենասիրության, քաջագործության, անվախության, համարձակության, ընկերասիրության մասին, ինքը ևս ապրում է այդ ամենը, դաստիարակվում, դատապարտում է վատը, կեղծիքը, սուտը, տեսնում է գեղեցիկը և նրա մեջ առաջանում են ազնիվ զգացմունքներ: Շարադրությունները կարող են լինել ստեղծագործական և վերլուծական (գրական երկի) բնույթի:Շարադրության համար աշակերտը պիտի կարողանա նյութեր հավաքել, որոշել շարադրության ծավալը, հիմնական մտքերը, դրանք համակարգի բերել, ավարտել շարադրանքը, քերականական, ոճական տեսակետից ճիշտ արտահայտել մտքերը: 4-5-րդ դասարանի աշակերտները պիտի սովորեն անկաշկանդ վերարտադրել կարդացածի բովանդակությունը, պատմեն էքսկուրսիայից ստացած տպավորությունները, դիտած նկարի, կինոնկարի, ցուցահանդեսի, թատրոնի մասին տալ փոքրիկ տեղեկություններ, գրել որոշ գործնական գրություններ՝ հասցե, տեղեկանք, նամակ, հեռագիր: 5-7-րդ դասարանի աշակերտները պիտի սովորեն վերլուծաբար վերարտադրել կարդացած երկի բովանդակությունը, պատմել իրենց անձնական կյանքի, զգացմունքների, մտորումների, ընտանիքի, ընկերական միջավայրի, զանազան հանդիպումների, կարդացած գրքերի մասին և գրել վերարտադրական, պատմողական, վերլուծական, բնութագրական, ստեղծագործական բնույթի շարադրություններ:

Ստեղծագործական բնույթի շարադրության համար նյութ կարող է ծառայել աշակերտի կյանքը, շրջապատը: Շարադրության այս տեսակն էլ կարող է լինել նկարագրական, վերլուծական, քննադատական, բնութագրում, դիմանկար, բնանկար: Կարելի է բնութագրել շրջապատի մարդկանցից որևէ մեկի արտաքինը, բնավորության գծերը, նախասիրությունները, նկարագրել տնային որևէ կենդանի և այլն: Օգտվելով դասագրքում եղած բնանկարից՝ նկարագրել շրջապատող բնությունը, օրինակ՝ Ռաֆֆու Արաքսի պատկերման օրինակով նկարագրել շրջապատում եղած որևէ գետ: Կարելի է գրել շարադրություն կարդացած գրքի մասին, նրա վերաբերյալ համառոտ տեղեկություն տալ: Շարադրությունը կարող է լինել նամակ, գործնական գրություն, օրագիր և այլն: Այն կարող է գրվել ինչպես դասարանում, այնպես էլ՝տանը, կարող է լինել անհատական, երբ տվյալ թեմայով միայն մի աշակերտ է գրում, մյուսները զանազան այլ

թեմաներ են գրում, և խմբային, երբ խմբերի բաժանված աշակերտներ են գրում միևնույն շարադրանքը: Եթե 5-րդդասարանում հանձնարարվում է պատմողական, դատողական տարրերով շարադրություն, դիմանկարի պարզ նկարագրություն, ապա 6-րդ դասարանում սրան ավելանում են վիճելի հարցերի շուրջ դատողություններ անելը, ավելի ընդարձակ պատմելը լսածի, տեսածի, հերոսների մասին, տրված առանցքային բառերով շարադրելը, 7-րդ դասարանում ավելանում են գործող անձանց ներքին ու արտաքին նկարագիրը, տեղանքի նկարագիրը, նկարի ընդարձակ վերապատմումը, 8-րդ դասարանում՝ դատողությունները կերպարների, արարքների մասին, իսկ ավագ դպրոցում՝ 10-12-րդ դասարաններում՝ հասարակական-քաղաքական թեմայով թեմատիկ բառերով ընդարձակ շարադրություններ գրելը և այլն: Գրական թեմայով շարադրությունները տրվում են անցած գրական ստեղծագործության վերաբերյալ: Դրանցում վերապատմում են սյուժեն՝ քնարական վերլուծությամբ, գաղափարական հարցերի քննարկմամբ,կերպարների բնութագրմամբ: Այս շարադրությունների ժամանակ պետք է աշխատել, որ աշակերտն ինքնուրույն գրի, արտահայտի սեփական կարծիքը:

Շարադրության մի տեսակ էլ բառ-շարադրությունն է, որը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, զարգացնում ինքնուրույն նախադասություններ կազմելու, ստեղծագործելու կարողությունը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է տրված բառերով կազմել նախադասություններ այնպես, որ դրանցով կազմվի կապակցված տեքստ: Աշակերտները կարող են տրված բառերով հոմանիշներն էլ օգտագործել:

Ուսուցողական շարադրություն կարելի է գրել՝

1. ըստ ուսուցչի կամ աշակերտների կազմած պլանի կամ հարցերի

2. ըստ տրված պարզ նախադասությունների

3.ըստ տրված բառերի և արտահայտությունների

4. ըստ գրական երկից սովորած պատկերավոր արտահայտությունների:

Թեստային աշխատանքներ:

Համաշխարհային փորձը ցույցէ տվել, որ աշակերտակենտրոն դպրոցի համար առավել արդյունավետ ստուգմանմիջոց է թեստային համակարգը: Թեստերը ևս նպատակ ունեն

զարգացնելու աշակերտի գրավոր և բանավոր խոսքը, իրականացնել գնահատման հիմնական գործառույթները՝գնահատման, վերահսկման, դաստիարակչական, ուսուցանող:

Ըստ իրենց նպատակների՝թեստերը լինում են.

ա) ընդհանուր գիտելիքների ստուգման, որը տրվում է թեմայի ավարտին, կիսամյակի, ուսումնական տարվա վերջում, բ) առաջադիմության ստուգման, որը տրվում է դասանյութի, թեմայի, կիսամյակի, տարվավերջում, գ) հայտորոշիչ կամ ախտորոշիչ. տրվում են պարբերաբար՝ որոշելու սովորողների թույլ և ուժեղ կողմերը՝ հետագայում ուսուցումը բարելավելու նպատակով, դ) տեղակայման թեստ. տրվում է դասընթացի սկզբում՝սովորողներին ըստ իրենց գիտելիքների և կարողությունների դասակարգելու համար: Գրեթե բոլոր թեստերում կիրառվում են վարժությունների և առաջադրանքների հետևյալ տեսակները՝

1. Բազմակի ընտրությամբ հարցեր. 3, 4, 5 տարբերակ, որից մեկն է ճիշտ
2. Համապատասխանեցման առաջադրանքներ
3. Բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ
4. Կարճ պատասխան պահանջող հարցադրումներ
5. Ստեղծագործական մոտեցում պահանջող հարցադրումներ:

Առաջին չորս տեսակները հիմնականում ստուգում են գիտելիքի կամ տեղեկատվության մտապահումը, դրանց ընկալումը և կիրառումը:

Եզրակացություն

Յուրաքանչյուր մարդ էլ կյանքում իր տեսածը, լսածը, մտածածն ու զգացածը բանավոր և գրավոր արտահայտելու, իր աշխատանքային փորձը ուրիշներին հաղորդելու, նամակներ, զեկուցումներ, թղթակցություններ, պատասխաններ ու ելույթներ, ինչպես նաև դիմում, տեղեկանք, արձանագրություն, քաղվածք, բնութագիր, ինքնակենսագրական գրելու անհրաժեշտություն է զգում: Այդ տեսակետից գրելու կարողությունը և գրածը արտահայտելու կարողությունը յուրաքանչյուր մարդու համար խիստ անհրաժեշտ է ու գործնական նշանակություն ունի: Գրավոր և բանավոր խոսքի զարգացումը մայրենի լեզվի ուսուցման գլխավոր խնդիրներից է: Խոսքը ցանկացած

մտավոր գործունեության հիմքն է, հաղորդակցական միջոցը: Համեմատելու, դասակարգելու, համակարգելու, ամփոփելու և արտահայտվելու կարողությունները ձևավորում են գիտելիքների յուրացման գործընթացում՝ խոսքի միջոցով և դրսևորվում են խոսքային գործունեության մեջ: Աշակերտի տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, գրական բանավոր և գրավոր խոսքը նրա մտավոր զարգացման ցուցանիշն է: Սովորողների՝ կապակցված խոսք կառուցելու կարողություններն ապահովում են ուսումնառության արդյունավետությունը բոլոր առարկաներից, մասնավորապես, հնարավորություն է ընձեռվում ընթերցանության հմտության և ուղղագրական գրագիտության ձևավորման համար: Խոսքի զարգացումը ոչ միայն սկզբունք է, այլև ուսումնական գործընթացի չափորոշչային բովանդակության հիմնական մասը, հետևաբար, նաև մայրենի լեզվի ուսուցման հիմնաքարը: Սակայն, չպետք է մոռանալ, որ գրավոր խոսքի յուրացման համար մեծ նշանակություն ունի բանավոր խոսքը: Խոսքն առաջանում է արտահայտվելու ցանկությունից: Հետևաբար ուսումնառության բարդ գործընթացում և հատկապես կապակցված խոսքի ուսուցման ընթացքում աշակերտին պետք է տալ նաև տեսական գիտելիքներ, սովորեցնել, որ նախադասությունները ճիշտ կազմեն, դրանք գործածեն տեղին և ժամանակին, համաձայնեցնեն, կիրառեն դեմքի, թվի և ժամանակի գործողության կանոնները: Դասարանից դասարան աշակերտներն աստիճանաբար, պարզից դեպի բարդը գնալովն հեշտից դժվարը սովորելով, ծանոթանում են այն պահանջներին, որոնց կիրառման անհրաժեշտությունը թելադրվում է տարբեր նպատակներով և իրավիճակներով: Բազմաբնույթ առաջադրանքների կատարման ընթացքում գիտակցում են, թե ինչ էնշանակում խոսել թեմային համապատասխան, բացահայտել հիմնական թեման, զատել առաջնայինը և երկրորդականը, խոսել տրամաբանական հաջորդականությամբ և կապակցված: Այս բոլոր հիմնախնդիրները լուծվում են, եթե ուսուցիչը դասը վարում է և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թորոսյան Կարինե, Չիբուխչյան Կարինե, Ուսուցանող գրավոր աշխատանքները տարրական դասարաններում, Երևան, 2012:

2. ՀՀ ԿԳ նախարարություն, Հայոց լեզու և գրականություն, Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, Տիգրան Մեծ, 2007:

3 .Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Փոխադրությունների ժողովածու, միջին և ավագ դպրոց, Երևան. 2010:

4. Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու10-12-րդ դասարանների, Երևան, 2010:

5. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Տարրական դասարաններ, Երևան, 1980: